

3. — Կարասիր: — Յիշեալ ամէն պաշարները բնականապէս կը պահուէին իրենց յարմար անօթոց մէջ, փայտեղէնք կամ տախտակեայ՝ չոր նիւթոց համար, եւ կաւեղէնք՝ խոնաւներուն: Չեմ ուզեր երեւակայութեան հարցնել անոնց թիւը կամ ձեւերը, կամ այժմեանէն հինը գուշակել. հնախօսութիւնն այդ ոճը չի ընդունիր: Միակ աղբիւրը զոր ունինք այս մասին՝ Վաստակոց գիրքն է. որ թէեւ թարգմանութիւն ժԲ-ժԳ դարու, եւ այդ շրջանէն առաջնորդ կը լինի Հայոց, բայց համոզուած եմ՝ որ իւր ցուցած հնարքներն յառաջագոյն ալ ընդհանուր էին բոլոր աբեւեղեայց:

Արդ՝ ցորենը կը շտեմարանէին «հորուկի» մէջ (Վաստ. 30), որ է հին «հորը» (Եւք, ԻԱ, 33), փորուած գետինը եւ աբուեստական շաղախով յատակը ծեփուած (Վաստ.): Հրեայք ալ ունէին այդպիսի «գոշք» խփով հանդերձ (Բ թագ. ԺԷ, 18), հոմանիշ ասոր. գոշքա՝ փոս բառին (Հիւբշ. 302): — «Երկայն հորի» մէջ կը կախէին նուռն եւ այլ մրգեր (Վաստ. 135): — «Կարասի» մէջ կը պահէին խնձոր, դամոն (134, '5): — «Ճառայից» մէջ՝ հապալաս, չոր թուզ ու ձէթ (136, '7, 116): — «Բիդաշի» մէջ՝ դալար թուզ (137): —